



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Սուտալ Աբասյան, Հերիք Շամոյան, Թոռուն Շամոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մրազ Միրոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նաիրա Գեվորգյանը

Լսեցին

ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՅՈՒԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Մեծաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծաձոր համայնքի ավագանին՝

որոշում է.

Հաստատել Մեծաձոր համայնքի ավագանու 03.10.2024թ. հերթական յոթերորդ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի <<Օթևան բնակավայրում խմելաջրի սնուցող ցանցի հիմնանորոգման աշխատանքների>> ծրագրային հայտին համաձայնություն տալու մասին:

2. Մեծածոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին:

3. Մեծածոր համայնքի ավագանու 2024թ.-ի հունվարի 19-ի «Մեծածոր համայնքի 2024 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՕԹԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼԱԶՐԻ ՍՆՈՒՑՈՂ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծածոր համայնքի ավագանին

որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծածոր համայնքի «Օթևան բնակավայրում խմելաջրի սնուցող ցանցի հիմնանորոգման աշխատանքների» ծրագրային հայտին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-3

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի 1-ին կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի պահանջներով, Մեծաձոր համայնքի ավագանին՝

որոշում է.

1. Ի գիտություն ընդունել Մեծաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի <<ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ.- Ի ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33 և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Մեծաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծաձոր համայնքի ավագանին

որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Մեծաձոր համայնքի ավագանու 2024թ.-ի հունվարի 19-ի N 2-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 26-Ն/

Ավագանու անդամներ

ՍՈՒՏԱԼ ԱՐԱՍՅԱՆ *[Signature]*

ԹՈՌՈՒՆ ՇԱՄՈՅԱՆ *[Signature]*

ՀԵՐԻՔ ՇԱՄՈՅԱՆ *[Signature]*

Համայնքի ղեկավար *[Signature]* ՄՐԱՋ ՄԻՐՈՅԱՆ



Նիստին արձանագրեց *[Signature]* Նաիրա Գեվորգյանը